ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2023

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՊՏՀ առկա ուսուցման բակալավրիատի ուսանողների համար նախատեսված ուղեցույցում ներկայացված են ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, ուսումնական գործընթացի կազմակերպման, ինչպես նաև գիտելիքի գնահատման սկզբունքները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌԵԿՏՈՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ.....5

1. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 6
2. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ..... 14
3. ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ..... 16
4. ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՋՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ..... 16
5. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ..... 28
6. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 30
7. ԳՐԱԴԱՐԱՆ 30
8. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 31
9. «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 31
10. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ..... 32
11. ՄԱՐՔԵԹԻՆԳԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ..... 33
11. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 33
12. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ 34

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ • ՓՈՐՁ • ՀԵԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՌԵԿՏՈՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Սիրելի՛ առաջին կուրսեցիներ

Շնորհավորում եմ ձեզ Հայաստանի Տնտեսագիտական մայր համալսարանի ուսանող դառնալու առիթով: Ցանկանում եմ հիշեցնել, որ գիտելիքն անկողոպտելի հարստություն է, և այդ հարստությունը կուտակելու լավագույն ժամանակաշրջանն եք ապրում դուք: Այսօրվանից սկսեք հարստանալ հոգով ու մտքով, քայլել ժամանակին համընթաց, հաստատակամ ու վճռական կերպով կերտել ձեր ապագան: Իսկ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը կամրապնդի ու կհովանավորի ձեր ձգտումները՝ արդիական կրթական ծրագրերին համապատասխանող մասնագիտական գիտելիք, հմտություններ և կարողություններ փոխանցելով, ձեզ օժտելով մրցակցային այնպիսի առավելություններով, որոնք թույլ կտան ինքնավստահ մուտք գործել մասնագիտական ցանկացած ասպարեզ, համապատասխանել տեղական և միջազգային աշխատաշուկաների պահանջներին:

Ուսումնառության խոստումնալից ու բացահայտումներով լի ճանապարհին հաջողություն եմ մաղթում յուրաքանչյուրիդ և խորհուրդ եմ տալիս, ներկայացվող ուղեցույցին ծանոթանալով, հստակորեն իմանալ սեփական իրավունքները, պարտականությունները, ուսումնական գործընթացի կազմակերպման սկզբունքները, տեղեկանալ կարևոր բազում մանրամասների, որոնք կհետաքրքրեն և օգտակար կլինեն ձեզ:

Բարին ընդ ձեզ:

Հարգանքով՝ ***ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ***
ՀՊՏՀ ռեկտոր

1. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Համալսարանի ուսանողներն իրավունք ունեն.

1.1. մասնակցելու իրենց կրթության բովադակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,

1.2. տեղեկացված լինելու գիտելիքի գնահատման մեխանիզմներին,

1.3. մասնակցելու կառավարման համապատասխան մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ բուհի կանոնադրությամբ,

1.4. մասնակցելու կրթական ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի որակի և գիտամանկավարժական կազմի գնահատման գործընթացներին՝ համալսարանում գործող կարգին համապատասխան,

1.5. անվճար օգտվելու համալսարանի գրադարանից, ընթերցասրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

1.6. մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին և սեմինարներին,

1.7. բողոքարկելու համալսարանի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

1.8. Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ ստանալու սահմանված չափի՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ (ներառյալ՝ անվանական), դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ,

1.9. ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և այլ նորմատիվ փաստաթղթերի, բուհի հետ կնքելու ուսումնառության պայմանների մասին պայմանագիր,

1.10. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտության դեպքում, ստանալու մինչև մեկ տարի ժամկետով ակադեմիական արձակուրդ,

1.11. ցանկության դեպքում ընդմիջելու ուսումը և զորակոչվելու բանակ, իսկ զորացրվելուց հետո, ձմեռային զորակոչի դեպքում՝ երկու ամսվա ընթացքում և ամառային զորակոչի դեպքում՝ երեք ամսվա ընթացքում ներկայացնելու դիմում ուսանողական իրավունքները վերականգնելու համար,

1.12. ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվելու արձակուրդում՝ առնվազն 7 շաբաթ ընդհանուր տևողությամբ,

1.13. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և համալսարանում սահմանված կարգին համապատասխան՝ տեղափոխվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների համալսարաններ,

1.14. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային շարժունության ծրագրերի պայմաններին համապատասխան՝ միջհամալսարանական պայմանագրերի շրջանակներում մեկ կիսամյակ ուսումնառելու համալսարանի գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատություններում,

1.15. ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ նախատեսված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի սահմանած կարգով,

1.17. կրթությունը դադարեցրած (բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակում կրթության դադարեցման դեպքի) նախկին սովորողը, անկախ ընդհատման պատճառից, իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները,

1.18. հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան (որոնցից մեկը՝ հեռակա),

1.19. ուսանողական կյանքին առնչվող հարցերի լուծման համար ստեղծելու ուսանողական հասարակական կազմակերպություններ,

1.20. հրամանագրվելուց հետո անվճար ստանալու ՀՊՏՀ նույնականացման քարտ (ASUE ID CARD), որն ապահովում է ելումուտը բուհ և թույլ է տալիս օգտվել գրադարանի ծառայություններից, մասնակցել կենտրոնացված համակարգչային քննություններին և այլն: ՀՊՏՀ նույնականացման քարտը կորցնելու կամ վնասելու դեպքում տրվում է նոր քարտ՝ վճարովի հիմունքներով:

2. Համալսարանի ուսանողները պարտավոր են.

2.1. սահմանված ժամկետում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,

2.2. տիրապետել կրթական ծրագրի վերջնարդյունքներով նախատեսված գիտելիքին, կարողություններին և հմտություններին,

2.3. կատարել համալսարանի ներքին կարգապահական կանոնների և ներքին իրավական ակտերի պահանջները,

2.4. հաճախել դասախոսություններին, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներին և մասնակցել փորձառությանը,

2.5. կատարել կրթական ծրագրում և դրա առանձին բաղադրիչների ծրագրերում ուսումնառությանը ներկայացվող պահանջները,

2.6. կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչները կատարելիս պահպանել համալսարանում գործող կարգերում առկա՝ հետազոտական էթիկային, բարեվարքությանը և ակադեմիական ազնվությանը ներկայացվող պահանջները,

2.7. ինքնուրույն ծանոթանալ ուսումնառության հետ կապված բոլոր փաստաթղթերին (քննագրաֆիկներ, մատյաններ, ժամանակացույցեր, տարբեր փաստաթղթերի ներկայացման ժամկետներ, փոխատեղման հրամաններ և այլն) համալսարանի համապատասխան տեղեկատվական միջոցներից (բուհի կայքէջ, ֆակուլտետային հայտարարությունների ցուցափեղկեր, ցուցանակներ),

2.8. խնամքով վերաբերվել համալսարանի սեփականությանը (գույք, գրքեր, ուսումնական ձեռնարկներ, սարքավորումներ և այլն): Ընդ որում, համալսարանի սեփականություն համարվող գույքին պատճառած վնասի համար ուսանողը կրում է նյութական պատասխանատվություն՝ գործող օրենսդրությանը համապատասխան: Առանց համալսարանի ղեկավարության թույլտվության, ուսանողներին արգելվում է լաբորատորիաներից և ուսումնական շենքերից դուրս հանել տարբեր սարքա վորումներ,

2.9. պահպանել հասարակական համակեցության և բարոյականության նորմերը, համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունները, որոնց խախտման դեպքում նրանց նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ բուհից հեռացում,

2.10. ժամանակին վճարել սահմանված ուսման վարձը (խոսքը վճարովի հիմունքներով կրթություն ստացողների մասին է)՝

- ուսանողն ուսման վարձը վճարում է իր հայեցողությամբ կամ ամբողջությամբ՝ կիսամյակի սկզբում կամ ամսական սկզբունքով,
- ուսանողը կիսամյակի ուսման վարձը պարտավոր է մարել նախքան քննաշրջանի սկիզբը,
- չորրորդ կուրսի ուսանողներն ուսման վարձը կարող են վճարել ամսական սկզբունքով, սակայն ոչ ուշ, քան փորձառության պաշտպանության օրը,



- առաջին կուրսի ուսանողներն առաջին կուրսի առնվազն մեկ ամսվա ուսման վարձը վճարում են մինչև սեպտեմբերի 15-ը,
- ուսման վարձն առաջին կիսամյակի առաջին ամսվա 15 օրերի ընթացքում չվճարելու դեպքում դիմորդը չի հրամանագրվում որպես համալսարանի ուսանող,
- մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը կիսամյակի համար նախատեսված ուսման վարձը չմարած ուսանողը կարող է հեռացվել համալսարանից,
- ուսման վարձը կայուն է ուսումնառության պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի ողջ ժամանակահատվածում՝ ըստ կուրսերի անընդհատ ուսումնառության դեպքում,
- կիսամյակի համար վճարված ուսման վարձը չի վերադարձվում՝ բացառությամբ առողջական վիճակի պատճառով ուսումնառությունն ընդհատելու դեպքի, վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամկետին,
- եթե վճարովի հիմունքներով սովորողը հեռացվել է բուհից ուսման վարձը չվճարելու պատճառով, ապա վերականգնման ժամանակ՝ մինչև հրամանագրումը, պետք է վճարի և՛ նախկին պարտքը, և՛ տվյալ կիսամյակի համար նախատեսված ուսման վարձը,
- վճարովի համակարգի ուսանողի ավելի վճարած ուսման վարձը, իբրև կանխավճար, փոխանցվում է որպես հաջորդ կուրսի ուսման վարձ, իսկ ավարտական կուրսում՝ վերադարձվում ուսանողին,
- վճարովի համակարգի ուսանողն ուսման վարձը վճարելուց հետո դրա մասին պարտավոր է տեղեկացնել դեկանատ՝ ներկայացնելով վճարման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ,
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված և իր մասնագիտությամբ ուսումնառությունը շարունակող ուսանողի ուսման վարձի չափը չի փոխվում, այսինքն՝ պահպանվում է զորակոչվելու պահին գործող վարձաչափը,
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված և իր մասնագիտությունը չլինելու կամ մեկ այլ պատճառով ուրիշ մասնագիտությամբ ուսումնառությունը շարունակող ուսանողի ուսման վարձը սահմանվում է զորակոչման պահին տվյալ մասնագիտության համար գործող ուսման վարձի չափով,
- ուսման վարձը վճարվում է փոխանցման կարգով՝ համալսարանին սպասարկող բանկերում բացված հաշվարկային հաշվին:

3. Խրախուսանքի և կարգապահական տույժերի կիրառումը, համալսարանից հեռացումը և ուսումնառության ընդհատումը

3.1. Ուսանողները կարող են օգտվել ուսման տարեկան վարձի՝ մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից:

3.1.1. Ուսանողի ուսման վարձը, ուսման առաջադիմության հիման վրա, ուսանողական նպաստի ձևով, լրիվ կամ մասնակիորեն փոխհատուցվում է ՀՀ Կառավարության կողմից՝ ամեն տարի տվյալ բուհին և մասնագիտությանը հատկացվող տեղերի ու ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

3.1.2. Սոցիալապես անապահով կամ սահմանամերձ բնակավայրերի ուսանողներին պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի համապատասխան փոխհատուցում տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.1.3. Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է ՀՀ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով համալսարան ընդունված ուսանողներին: Մյուս կուրսերում ուսանողական նպաստ տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:

3.1.4. Ուսանողի բարձր առաջադիմության և սոցիալական վիճակի արդյունքների հաշվառմամբ, նախորդ կիսամյակի արդյունքների հիման վրա, համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում (զեղչ) տրամադրելու չափանիշներն ու կարգը սահմանված են «ՀՊՏՀ-ում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգով:

3.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուսանողները ստանում են ուսանողական կրթաթոշակ պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակներ, դրամաշնորհներ, ուսանողական վարկեր:

Խրախուսման նպատակով պետական կրթաթոշակ է տրվում գերազանց կամ լավ առաջադիմություն և հասարակական ակտիվություն ու

պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին: Պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին: Նախատեսված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով տրվում են այլ ուսանողների:

3.3. Բարձր առաջադիմության, գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցության համար համալսարանի ուսանողների համար սահմանված են հետևյալ խրախուսանքները.

ա) շնորհակալության հայտարարում,

բ) պատվոգրով պարգևատրում,

գ) հուշանվերներով պարգևատրում,

դ) միանվագ դրամական պարգևատրում:

Ուսանողները խրախուսվում են ռեկտորի հրամանով, ինչի մասին տեղեկացվում են համալսարանի տեղեկատվական միջոցներից:

3.4. Այն ուսանողները, որոնք չեն կատարում ուսումնական պլանները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են ուսումնական գործընթացի ժամանակացույցը, համալսարանի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, ռեկտորատի որոշմամբ և ռեկտորի կամ նրա լիազորած անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ համալսարանից հեռացվելը:

3.5. Ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

ա) նկատողություն,

բ) խիստ նկատողություն

գ) համալսարանից հեռացում:

Կարգապահական տույժերը կիրառվում են անմիջապես խախտման հայտնաբերման պահից: Եթե ուսանողը մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվում, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

Արգելվում է ուսանողներին բուհից հեռացնել հիվանդության, ակադեմիական, հղիության ու ծննդաբերության և այլ արձակուրդների ընթացքում:

3.6. Ուսանողը հեռացվում է բուհից.

ա) անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակում անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում,

բ) բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում,

գ) բուհի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում:

3.7. Ուսանողն ազատվում է բուհից.

ա) իր դիմումի համաձայն,

բ) այլ բուհ տեղափոխվելու դեպքում:

3.8. Ուսանողի ուսումնառությունն ընդհատվում է.

ա) ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում,

բ) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում,

գ) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի դեպքերում:

4. Համալսարանում ուսումնական պարապմունքներն անցկացվում են ըստ հաստատված ուսումնական պլանների և ծրագրերի:

5. Դասացուցակը կազմվում է կիսամյակի համար և հրապարակվում է տվյալ կիսամյակի մեկնարկից ոչ ուշ, քան 5 օր առաջ:

6. Համալսարանում 1 դասի տևողությունը 80 րոպե է: Ուսումնական պարապմունքների մեկնարկի և ավարտի մասին ուսանողները տեղեկացվում են զանգի ազդանշանով: Պարապմունքների ակադեմիական ժամի ավարտից հետո սահմանված է ընդմիջում՝ 10 րոպե տևողությամբ: Երկրորդ և երրորդ պարապմունքների միջև սահմանված է ընդմիջում՝ 20 րոպե տևողությամբ:
7. Զանգից հետո ուսանողի մուտքը լսարան, մինչև ընդմիջումը, առանց դասախոսի թույլտվության, արգելվում է: Ուսումնական պարապմունքների բնականոն ընթացքն ապահովելու համար բոլոր ուսումնական և հարակից տարածքներում պետք է պահպանվի լռություն:
8. Լսարաններում, լաբորատորիաներում գործնական պարապմունքներ անցկացնելու համար յուրաքանչյուր կուրս բաժանվում է խմբերի և ենթախմբերի:
9. Յուրաքանչյուր խմբում առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից ընտրվում է ավագ, խմբի ավագն անմիջականորեն ենթարկվում է ֆակուլտետի դեկանին, իր խմբին տեղեկացնում է նրա բոլոր կարգադրությունների ու ցուցումների մասին:
10. Յուրաքանչյուր խմբի համար լրացվում է մատյան, որը պահվում է ֆակուլտետի դեկանատում և ամեն օր, ամեն դասից առաջ հանձնվում է դասախոսին:
11. Համալսարանի տարածքում արգելվում է աղմկելը, պարապմունքների ժամանակ, առանց դասախոսի թույլտվության, էլեկտրոնային սարքեր և բջջային հեռախոսներ օգտագործելը:

2. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

Կրեդիտային համակարգը եվրոպական երկրներում լայն կիրառություն է ստացել հատկապես վերջին տասնամյակում՝ Կրեդիտների կուտակման և փոխանցման համաեվրոպական համակարգի (ECTS) ստեղծման արդյունքում: Յուրաքանչյուր դասընթացին շնորհվում է համապատասխան կրեդիտ: Ըստ կրեդիտների փոխանցման և կուտակման միասնական համաեվրոպական համակարգի՝ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը 1 ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ, իսկ ամբողջ ուսումնառության գումարային կրեդիտների քանակը՝ 240 ECTS կրեդիտ:

Դա նախատեսված է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրացնելու համար: Կրթական ծրագրի բոլոր դասընթացների համար սահմանվում են կրեդիտներ, որոնք արտահայտում են ուսանողին ներկայացվող լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքի ուսումնական լրիվ բեռնվածությունը: Ուսանողը վաստակում է սահմանված կրեդիտը համապատասխան դասընթացը հաջողությամբ յուրացնելու և գնահատականի դրական շեմ ապահովելու դեպքում:

Կրեդիտը չի փոխարինում թվանշանով գնահատմանը, և վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում ըստ ստացած թվանշանների: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև որևէ փոխներգործություն չկա: Կրեդիտայինը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

- Կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը:
- Կրեդիտներ են ամրագրվում կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, փորձառություններին, ավարտական աշխատանքին և այլն:

ECTS կրեդիտը համարժեք է 30-ժամյա (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Տարեկան ուսումնական գործընթացը կազմակերպվում է ըստ երկու՝ աշնանային և գարնանային կիսամյակների՝ 20-ական շաբաթ տևողությամբ, որից 4 ական շաբաթ տրվում է քննություններին:

Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է (ներառյալ՝ ինքնուրույն արտալսարանային աշխատանքը), որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:

Ըստ գործող կարգի՝ բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կարող է կազմել 23-30 ժամ:

3. ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀՊՏՀ ում ներդրված են ընտրովի դասընթացներ, որոնք ներառված են ուսումնական պլաններում: Յուրաքանչյուր ընտրովի դասընթաց մատուցվում է մեկ կիսամյակի ընթացքում: Միասնական համակարգով, ըստ համապատասխան նորմատիվների, ընդհանրական և մասնագիտական առարկաների ընտրովի դասընթացներ կարող են ներդրվել բոլոր մասնա- գիտությունների ուսանողների համար:

Եթե տվյալ խմբում նախատեսվել է մեկ ընտրովի դասընթաց, ապա պետք է առաջարկվի առնվազն երկու ընտրովի դասընթացների անվանում, երկու ընտրովի դասընթացների դեպքում՝ երեք և ավելի, երեքի դեպքում՝ առնվազն չորս և այլն:

Դասընթացների ընտրության գործընթացը:

Ըստ ընտրովի դասընթացների՝ ուսանողների գրանցումը կատարվում է տեղեկատվությունը նրանց տրամադրելուց հետո՝ մինչև մայիսի 1-ը:

Տվյալ ընտրովի դասընթացը համարվում է կայացած, եթե գրանցվել է առնվազն 25 ուսանող: Հակառակ դեպքում՝ տվյալ դասընթացին գրանցված փոքրաթիվ ուսանողներին առաջարկվում է միանալ որևէ կայացած խմբի:

4. ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ուսումնառության արդյունքների հաշվարկման կրեդիտային համակարգի հիմնական առանձնահատկությունն այն է, որ գնահատման դաշտում ընդգրկված են նաև ուսանողների անհատական և ինքնուրույն աշխատանքները: Հետևաբար՝ նույն սկզբունքներով է կատարվում լսարանային, անհատական, թեստային և այլ գրավորների, սեմինարների ընթացքում՝ բանավոր պատասխանների, գործնական պարապմունքների արդյունքների գնահատումը:

Կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան՝ ՀՊՏՀ-ում կիրառվում է ուսանողների գիտելիքի գնահատման բազմագործոնային համակարգ: Ուսանողի՝ որոշակի առարկայի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում գնահատման գործոնների և դրանց միավորների հիման վրա՝ հաշվի առնելով հաճախումները և ընթացիկ ակտիվությունը,

անհատական աշխատանքը և գիտելիքի ստուգումը: Ուսանողների գնահատումն իրականացվում է 20 միավորային սանդղակով, որտեղ անցողիկ շեմը համարվում է 8-ը:

Աղյուսակ 1

Բազմագործոնային գնահատման համակարգի գործոնները և միջակայքը

	ԳՈՐԾՈՆՆԵՐ՝ *քննությամբ ավարտվող, անհատական աշխատանք պարունակող դասընթացների համար*	*Գնահատական*
1	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	0-6
2	Ուսանողի անհատական աշխատանք	0-2
3	Քննություն	0-12

	ԳՈՐԾՈՆՆԵՐ՝ *քննությամբ ավարտվող, անհատական աշխատանք չպարունակող դասընթացների համար*	*Գնահատական*
1	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	0-8
2	Քննություն	0-12

	ԳՈՐԾՈՆՆԵՐ՝ *ստուգարքով ավարտվող դասընթացների համար*	*Գնահատական*
1	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	0-12
2	Ստուգում	0-8

Բոլոր գնահատականները գրանցվում են ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ:

Հաճախումների և ակտիվության բաղադրիչը անհատական աշխատանք պարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների համար գնահատվում է 0–6, անհատական աշխատանք չպարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների համար՝ 0–8, իսկ ստուգարքով ավարտվող դասընթացների համար՝ 0–12 միավոր միջակայքում՝ 1,0 միավոր քայլով:

Անհատական աշխատանքի գնահատման նվազագույն քայլը 0,25, բանավոր քննության դեպքում՝ 1, թեստային քննության դեպքում՝ առնվազն 0,25 միավոր է: Բանավոր քննություններն անցկացվում են հանձնաժողովներով:

Հաճախումների ցուցանիշն ընթացիկ ակտիվության գործոնի գնահատականի վրա անդրադառնում է հետևյալ կերպ.

Աղյուսակ 2

Ընթացիկ ակտիվության գնահատում

Հաճախումների ցուցանիշը	Ընթացիկ ակտիվության առավելագույն գնահատականը		
	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատականի՝ քննությամբ ավարտվող, առնվազն աշխատանք պարունակող դասընթ. համար	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատականի՝ քննությամբ ավարտվող, առնվազն աշխատանք չպարունակող դասընթ. համար	Որպես ամբողջական հաշվարկային գնահատական՝ ստուգաքննությամբ ավարտվող դասընթացների համար
80,1-100,0	6	8	8
60,1-80,0	4	5	5
40,0-60,0	2	3	3
Մինչև 40	0	0	0

Գիտելիքի ստուգման քննություններն իրականացվում են նշված եղանակներով՝

1. թեստային–համակարգչային,
2. բանավոր

:

Մասնագիտական դասընթացներից գիտելիքի ստուգման եղանակներ առաջարկում է ամբիոնը, որոշում է ընդունում ռեկտորատը: Գնահատման առումով, դասընթացները լինում են.

1. տարբերակված գնահատումով, որի դեպքում գնահատումները կատարվում են թվային և տառային նշագրումով,
2. ստուգարքով գնահատվող, որի դեպքում դասընթացը գնահատվում է «ստուգված/չստուգված» սկզբունքով:

Դասախոսը սկզբից ևեթ պարտավոր է ուսանողներին ներկայացնել տվյալ դասընթացի առարկայական ծրագիրը, գիտելիքի ստուգման հարցաշարը, թեմաների ուսումնասիրման ժամանակացույցը, գնահատման չափանիշները և գիտելիքի ստուգման ու անցկացման կարգը:

Կիսամյակի քննաշրջանից հետո յուրաքանչյուր դասընթացի համար հաշվարկվում է վերջնական գնահատական:

Ինչպես տարբերակված, այնպես էլ ստուգարքով ավարտվող դասընթացների համար հաշվարկային գնահատականը նույնացվում է տառային նիշով (աղյուսակ 3, 4):

Աղյուսակ 3

Տարբերակված գնահատման սանդղակ

Ավանդական գնահատական	*Գնահատականը 20 միավորային համակարգում*	*Գնահատականի տառային նիշը*
գերազանց	19,1-20	A+
գերազանց	18,1-19,0	A
գերազանց	17,1-18,0	A-
լավ	16,1-17,0	B+
լավ	15,1-16,0	B
լավ	14,1-15,0	B-
բավարար	13,1-14,0	C+
բավարար	12,1-13,0	C
բավարար	8,0-12,0	C-
անբավարար	փոքր է 8-ից	D

Աղյուսակ 4

Ստուգարքով ավարտվող դասընթացների գնահատման սանդղակ

Ավանդական գնահատական	*Գնահատականը 20 միավորային համակարգում*	*Գնահատականի տառային նիշը*
ստուգված	8,0-20	S
չստուգված	փոքր է 8-ից	U

4.1. Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն

- Հաճախումները և ընթացիկ ակտիվությունը բազմագործոնային գնահատման համակարգի միավորված գործոն են (աղյուսակ 2):
- Հաճախումները և ընթացիկ ակտիվությունը հաշվառվում են դասախոսությունների, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների ժամանակ՝ մատյաններում:
- Հաճախումները չեն կարող հաշվառվել ըստ դասախոսի անհատական գրառումների:
- Ուսանողի ակտիվությունը հաշվառելիս հարգելի և անհարգելի բացակայությունները տարբերակվում են: Հարգելի են համարվում՝

ա. հիվանդության պատճառով մեկ և ավելի օր տևողությամբ բացակայությունները. այս դեպքում ուսանողը, դիմումի հետ միասին, ֆակուլտետի դեկանին է ներկայացնում հիվանդության մասին քաղվածք ամբուլատոր բժշկական քարտից, և դեկանն ընդունում է համապատասխան որոշում,

բ. ռեկտորատի որոշմամբ՝ մեկ շաբաթ և ավելի տևողությամբ բացակայություններն այլ պատճառներով (ընտանեկան, գիտական և մարզամշակութային միջոցառումներին մասնակցության, այլ բացառիկ դեպքեր):

- Հաճախումների հաշվառման համար պատասխանատու է դասախոսը՝ կատարելով համապատասխան գրանցումներ մատյանում:
- Բացակայությունների վերաբերյալ գրանցումները գնահատման ամփոփաթերթում կատարում է դասախոսը:

- Դասախոսը կիսամյակի ընթացքում մատյանում կատարում է ուսանողի ընթացիկ ակտիվության վերաբերյալ նշումներ, որոնց հիման վրա էլ հաշվարկվում է ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը:
- Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է տվյալ կիսամյակի ընթացքում՝ հարցումների հիման վրա:
- Գնահատում է կատարվում գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքների ընթացքում, ինչպես նաև դասախոսությունների ժամանակ՝ դասախոսի հարցադրումներին ուսանողների տված պատասխանների հիման վրա:
- Ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը հաշվարկվում է որպես հարցումների գնահատումների միջին թվաբանական:
- Հաճախումները և ընթացիկ ակտիվությունը պետք է ամփոփվեն քննաշրջանից առաջ:

4.2. Գնահատման ամփոփում

- Գիտելիքի գնահատումը կատարվում է ըստ սահմանված ժամանակացույցի.
  ա) ստուգարքով ավարտվող դասընթացների դեպքում՝ մեկ անգամ դասընթացի ավարտից հետո,
  բ) քննությամբ ավարտվող դասընթացների դեպքում՝ քննության ընթացքում:
- Գիտելիքը ստուգվում, գնահատվում և արդյունքները գրանցվում են ամփոփաթերթում՝ ստուգումն անցկացնելու օրը:
- Հարգելի պատճառով գիտելիքի ստուգմանը չներկայացած ուսանողի համար կազմակերպվում է լրացուցիչ ստուգում:
- Քննությանը չներկայանալը հարգելի կարող է համարվել.
  - ✓ եթե ուսանողը կամ նրա ներկայացուցիչը մինչև գիտելիքների ստուգման կազմակերպման աշխատանքային օրվա ավարտը չներկայանալու վերաբերյալ ռեկտորի աշխատակազմ դիմում է ներկայացնում ռեկտորի անունով,
  - ✓ ռեկտորի աշխատակազմում պարտադիր նշում է կատարվում դիմումն ընդունելու օրվա վերաբերյալ,
  - ✓ տվյալ օրը կամ հետագայում դիմումին կցվում է քննությանը չներկայանալը հարգելի համարելու վերաբերյալ հիմնավորող փաստաթուղթ, որը ներկայացվում է համապատասխան ֆակուլտետի դեկանատ:
- Ամփոփիչ ստուգումներից հետո, մեկ շաբաթվա ընթացքում կազմվում է հարգելի պատճառով չներկայացած ուսանողների գիտելիքի լրացուցիչ ստուգումների կազմակերպման ժամանակացույց:

- Հարգելի պատճառով չներկայացած ուսանողների գիտելիքի ստուգումները կազմակերպվում են ուղեգրերով՝ նախքան վերահանձնումը:
- Եթե ուսանողի բացակայությունը տևական է ու հիմնավորված, և այդ պատճառով նա չի հասցնում քննաշրջանի ավարտից հետո առաջին շաբաթվա ընթացքում ներկայացնել փաստաթղթերը, ապա նրա գիտելիքի ստուգման լրացուցիչ օր նշանակելու վերաբերյալ հարցը դեկանի ներկայացմամբ քննարկվում է ռեկտորատում:
- Եթե ուսանողը բացակայում է նաև լրացուցիչ նշանակված օրը, ապա տվյալ ուսանողի համար նոր ստուգում չի կազմակերպվում, կամ բացառիկ դեպքերում դա կարող է իրականացվել ռեկտորատի որոշմամբ:
- Գիտելիքի կենտրոնացված ստուգումներ կազմակերպվում են.
  – հարգելի պատճառով չներկայացած ուսանողների համար,
  – վերահանձնումների դեպքում:
- Կենտրոնացված քննություններին կամ ստուգարքներին ուսանողը պարտավոր է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով:

4.2.1. Գնահատման գործընթացը

1. Նույն դասընթացի շրջանակներում գիտելիքը ստուգվում է նույն հարցաշարերով:
2. Գնահատման վերաբերյալ վեճերը և քննական կարգի տեխնիկական խախտումները լուծվում են ռեկտորատի քննարկմամբ:

4.2.2. Գնահատականի բողոքարկումը

1. Ուսանողն իրավունք ունի բողոքարկելու թեստային քննության գնահատականը դրա անցկացումից, դրա մասին տեղեկացվելուց և արդյունքը քննարկելուց հետո՝ 5 օրվա ընթացքում: Բանավոր քննության դեպքում ինչպես բողոքարկումը, այնպես էլ գնահատականի փոփոխությունը կատարվում են նույն օրը՝ գնահատականի հրապարակումից անմիջապես հետո առանց լսարանից դուրս գալու: Բանավոր քննության գնահատականի վերանայման ժամանակ պարտադիր է ամբիոնի վարիչի ներկայությունը:
2. Բողոքարկման դեպքում ուսանողը լրացնում և դեկանին է ներկայացնում բողոքարկման թերթիկը (բացի բանավոր ստուգումից):
3. Բողոքարկման թերթիկը թեստի հետ դեկանը ներկայացնում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին: Վերջինս դա ուղարկում է ամբիոն կամ համապատասխան մասնագիտական հանձնաժողով՝ քննարկման համար:
4. Բողոքարկված թեստն անցնում է քննարկման հետևյալ փուլերը.
   ✓ վերանայում և վերագնահատում ամբիոնում՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատած հանձնաժողովի կողմից,

- ✓ հանձնաժողովի գրավոր կարծիքի ներկայացում և հիմնավորում՝ ուսանողի և ամբիոնի վարիչի մասնակցությամբ (ամբիոնում):

5. Բողոքարկված թեստը ռեկտորատի որոշմամբ կարող է ուղարկվել վերագնահատման երկրորդ անգամ:
6. Քննարկման գործընթացն ամբիոնում իրականացվում է բողոքարկման թերթիկը ստանալու պահից՝ 2 օրվա ընթացքում:
7. Բողոքարկման արդյունքում գրանցված գնահատականը հաստատվում է բողոքարկման ամբիոնային հանձնաժողովի անդամների ստորագրությամբ:
8. Բողոքարկման արդյունքում գրանցված գնահատականն արձանագրվում է ամփոփաթերթում:

4.3. Անհատական աշխատանք

Քննությամբ ավարտվող դասընթացի վերջնական գնահատականը ձևավորվում է նաև ըստ ուսանողի անհատական աշխատանքի, որը նպատակ ունի կատարելագործելու ուսանողների գիտահետազոտական հմտությունները:

- Կիսամյակի ընթացքում ուսանողին հանձնարարվում է երկուսից ոչ ավելի անհատական աշխատանք:
- Անհատական աշխատանք հանձնարարվում է դասերի մեկնարկից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում:
- Անհատական աշխատանքի թեմատիկան և տրման ձևը հաստատում է ամբիոնը:

- Անհատական աշխատանքի թեմատիկան ընդգրկում է տվյալ դասընթացի ծրագիրը:
- Անհատական աշխատանքների թեմաները չեն կարող կրկնվել նույն խմբի ուսանողների համար:
- Անհատական աշխատանքի իրականացման ժամկետը որոշում է դասախոսը (նվազագույնը՝ մեկ ամիս, թեման հանձնարարելուց հետո):
- Անհատական աշխատանքն իրականացվում է գրավոր՝ համակարգչային շարվածքով:
- Անհատական աշխատանքի պաշտպանությունը պարտադիր է: Դասախոսը պարտավոր է ուսանողներին ներկայացնել անհատական աշխատանքների գնահատման չափանիշները և աշխատանքի պաշտպանության անցկացման կարգը:
- Անհատական աշխատանքի իրականացման ընթացքում դասախոսն ուսանողի հետ խորհրդատվական արտալսարանային աշխատանք է կատարում:
- Յուրաքանչյուր անհատական աշխատանք գնահատվում է որպես վերջնական հաշվարկային գնահատականի մաս՝ 0–2 միջակայքում: Անհատական աշխատանքի գնահատումն իրականացվում է 0.25 միավոր քայլով:
- Տվյալ դասընթացի համար անհատական աշխատանքի գնահատականն արձանագրվում է մինչև կիսամյակային դասընթացների վերջին շաբաթվա մեկնարկը:
- Դասախոսն անհատական աշխատանքի գնահատականն արձանագրում է ամփոփաթերթում:
- Անհատական աշխատանքի գնահատականի մասին ուսանողը տեղեկացվում է պաշտպանությունից անմիջապես հետո:
- Անհատական աշխատանքները հաշվառվում և պահպանվում են ամբիոնում՝ մինչև տվյալ կիսամյակի ՄՈԳ-երի հրապարակումը:
- Անհատական աշխատանքին ներկայացվող պահանջներն են.
  – ներկայացվում է A4 ձևաչափի թղթի վրա (ծավալը՝ 10–20 էջ),
  – օգտագործվում են գրականության ցանկում նշված աղբյուրներ:
- Անհատական աշխատանքում կատարված ինքնուրույն տեսական վերլուծությունները և նյութի առավել խոր, գրագետ ու հետաքրքրական բանավոր մատուցումը հնարավորություն են տալիս արժանանալու բարձր գնահատականի:
- Անհատական աշխատանքը չպետք է լինի արտագրություն սկզբնաղբյուրներից և այլ ուսումնասիրություններից, գրագողության դեպքում այն կգնահատվի 0 միավոր:

- Դասախոսը գրախոսում է անհատական աշխատանքը՝ հակիրճ տեքստում հիմնավորելով իր կարծիքը:
- Վերոնշյալ անհրաժեշտ պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում աշխատանքը չի գնահատվում և վերադարձվում է լրամշակման: Լրամշակված տարբերակը պետք է ներկայացվի դասախոսին և գնահատվի՝ նախքան ամփոփիչ քննաշրջանը:

4.4. Փորձառության կազմակերպման և գնահատման կարգը

Ուսումնաարտադրական փորձառությունը կազմակերպվում է ավարտական կուրսերի ուսանողների համար ՀՊՏՀ-ում, պետական և մասնավոր հատվածում գործող ՀՊՏՀ գործընկեր կազմակերպություններում, հասարակական և քաղաքացիական գործունեություն ծավալող կազմակերպություններում, արտասահմանյան կազմակերպություններում, միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում և այլ շահագրգիռ կառույցներում: Յուրաքանչյուր ուսանողի համար փորձառության վայրում նշանակվում է ղեկավար, իսկ ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմից՝ փորձառության ղեկավար և/կամ փորձառության ընդհանուր համակարգող:

Նախքան փորձառության սկիզբը՝ յուրաքանչյուր ամբիոն, ելնելով իր մասնագիտության, ինչպես նաև փորձառության անցկացման վայր ընտրված կազմակերպության բնույթից և առանձնահատկություններից, կազմում է փորձառության ծրագրեր, որոնցում ներառում է ուսանողներին ուղղորդող առաջադրանքներ, փորձառության տևողությունն ու ժամկետները, փորձառության արդյունքներն արտացոլող հաշվետվության ձևաչափը, հաշվետվության ներկայացման և պաշտպանության հիմնական պահանջները, գնահատման մեթոդներն և չափանիշները:

Ամբիոնի փորձառության ղեկավարները մինչև փորձառության սկիզբը ուսանողներին են տրամադրում փորձառության ուղեցույցը, կազմակերպությունների ցանկը, որտեղ ուսանողները կարող են անցնել իրենց փորձառությունները, ինչպես նաև փորձառությունների նկարագրերն ու դրանց լրացման ուղեցույցը:

Ուսանողների համար ուսումնաարտադրական փորձառությունները հնարավոր է իրականացնել երեք ձևաչափով, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ամբիոնի ղեկավարը ներկայացնում է ուսանողին: Այս ձևաչափերն են՝

- ✓ ՀՊՏՀ-ի կողմից ուղեգրման,
- ✓ ուսանողների աշխատավայրում փորձառության կազմակերպման
- ✓ ուսանողների նախաձեռնությամբ որևէ կազմակերպությունում:

Փորձառության գնահատումն իրականացվում է 20 միավորային համակարգով: Փորձառության գնահատումը կազմակերպվում է փորձառության վայրից

ներկայացված փորձառության նկարագրի և փորձառության հաշվետվության հիման վրա:

Փորձառության գնահատումը կազմակերպվում է փորձառության վայրից ներկայացված փորձառության նկարագրի և փորձառության հաշվետվության հիման վրա:

- Փորձառության հաշվետվության պաշպանությունը կազմակերպվում է ամբիոնի նիստով հաստատված հանձնաժողովը:
- Փորձառությունը համարվում է չհանձնած, եթե.
  - ✓ փորձառության ամփոփ գումարային գնահատականը փոքր է 8-ից,
  - ✓ ուսանողը սահմանված ժամկետում չի հանձնել փորձառության նկարագիրը և հաշվետվությունը,
  - ✓ ուսանողը չի ներկայացել փորձառության հաշվետվության պաշտպանությանը,
  - ✓ ուսանողը պատշաճ կերպով չի պաշտպանել փորձառության հաշվետվությունը,
  - ✓ չի հաճախել փորձառության սահմանված տևողության կեսից ավելին (ըստ շաբաթների)
- Փորձառության պաշտպանությունը կազմակերպվում է մեկ անգամ:
- Փորձառության գնահատման համար վերահանձնում չի կազմակերպվում, այսինքն թորձառությունը չանցած ուսանողը հեռացվում է ՀՊՏՀ-ից՝ իր ուսանողական իրավունքները վերականգնելու և փորձառություն կրկին անցնելու հնարավորությամբ:

Աղյուսակ 5

Փորձառության գնահատման սանդղակ

	Փորձառության գնահատման գործոններ	*Գնահատական*
1	հաճախումներ	0-4
2	ամբիոնի ղեկավարի գնահատական	0-4
3	փորձառության հաշվետվության պաշտպանություն	0-12

4.5. Վերահանձնում

- Վերահանձնումը կազմակերպվում է ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականի հիման վրա, երբ այն հավասար է «D»-ի՝ քննության պարագայում կամ «U»-ի ստուգարքի պարագայում, այսինքն՝ թվային արժեքով փոքր է 8-ից (առանց կլորացման):
- Վերահանձնման ենթակա առարկաների քանակը չի սահմանափակվում:
- Ե՛վ քննությամբ, և՛ ստուգարքով ավարտվող դասընթացների առաջին և երկրորդ վերահանձնումները գնահատվում են 0–12 միավորով:

- Վերահանձնումների ժամանակ «անհատական աշխատանք», «ընթացիկ ակտիվություն և հաճախումներ» գործոններով ուսանողի ստացած գնահատականները պահպանվում են, և դրական գնահատական ստանալու համար անհրաժեշտ է ամփոփիչ վերահանձնման 12 միավորից հավաքել սահմանված անցողիկ շեմի պակասող միավորը:
- Տվյալ դասընթացից վերահանձնման մասնակցած ուսանողների վերջնական հաշվարկային գնահատականը ձևավորվում է ըստ «անհատական աշխատանք» (եթե դա նախատեսված է դասընթացի ծրագրով), «ընթացիկ ակտիվություն և հաճախումներ» գործոնների և վերահանձնման գնահատականների հանրագումարի:
- Դիպլոմի հավելված է փոխանցվում վերահանձնումից հետո ձևավորված վերջնական գնահատականը:
- Կիսամյակի արդյունքներն ամփոփելուց հետո, նախքան վերահանձնումը, դեկանատը ձևավորում է վերահանձնման թույլատրված ուսանողների անվանացանկը՝ դա հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:
- Հաստատված ժամանակացույցին համապատասխան՝ ուսանողը կարող է երկրորդ անգամ վերահանձնել տվյալ դասընթացը, եթե առաջին անգամ չի հաղթահարել դրական գնահատականի շեմը: Այս դեպքում առաջին վերահանձնման արդյունքը չի գումարվում հաշվարկված գնահատականին:
- Առավելագույնը 12 կրեդիտ ակադեմիական պարտք ունեցող ուսանողների համար առարկայական պարտքերի վերահանձնումը կազմակերպվում է յուրաքանչյուր կիսամյակի սկզբին՝ 4–6-րդ շաբաթների ընթացքում: 12 կրեդիտ ակադեմիական պարտքի դեպքում վերահանձնումների ժամանակ չեն պահպանվում «անհատական աշխատանք», «ընթացիկ ակտիվություն և հաճախումներ» գործոններով ուսանողի ստացած գնահատականները, և դրական գնահատականի շեմը հաղթահարելու համար անհրաժեշտ է հավաքել սահմանված 20 միավորի 40%-ը:
- Ընթացիկ ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունվածների, իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքը՝ բուհի կողմից սահմանված կարգով և ժամկետներում ևս երկու անգամ վերահանձնելով համապատասխան առարկայական դասընթացների քննությունները, որոնց ցանկը հաստատում է բուհը՝ հաշվի առնելով առարկաների շարունակականության սկզբունքն ըստ ուսումնական պլանի:

- Ակադեմիական պարտք ունեցող ուսանողները, անկախ ՄՈԳ-ից, չեն կարող օգտվել ուսումնառության անվճար համակարգի մրցույթին մասնակցելու իրավունքից, ինչպես նաև բուհի կողմից տրամադրվող ուսման վարձի զեղչերից:
- Արգելվում է վերահանձնել ուսումնառության ընթացքում ստացած դրական գնահատականը:

5. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Համալսարանում կրթական գործընթացը կազմակերպվում և իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով: Համալսարանում գործում են ums.asue.am էլեկտրոնային դեկանատի համակարգը և moodle.asue.am էլեկտրոնային ուսուցման համակարգը:

ums.asue.am էլեկտրոնային դեկանատի համակարգում հաշվառվում են ուսանողների բացակայությունները, ընթացիկ ակտիվության, անհատական աշխատանքների, ինչպես նաև գիտելիքի ստուգման գնահատականները:

Moodle-ը համակարգը մոդուլային օբյեկտի վրա հիմնված դինամիկ ուսումնական միջավայր է, որն իրենից ներկայացնում է ուսուցման կառավարման համակարգ: Այն կենտրոնանում է դասախոսի և ուսանողների միջև փոխգործակցության կազմակերպման վրա և հարմար է ինչպես հեռավար դասընթացներ կազմակերպելու, այնպես էլ առկա ուսուցմանը աջակցելու համար:

Moodle.asue.am էլեկտրոնային ուսուցման համակարգը ՀՊՏՀ-ում ուսանող-դասախոս հաղորդակցության միակ պաշտոնական հարթակն է: Ուսանողներին համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի և դեկանատների կողմից տրամադրվում են նույնականացման անձնական մուտքանուններ (կոդեր) և առաջին մուտքի գաղտնաբառեր (որը առաջին մուտքից հետո ուսանողը կարող է փոփոխել իր հայեցողության): Moodle.asue.am համակարգ ուսանողի հետագա մուտքերն իրականացվում են ըստ այդ մուտքանունների և գաղտնաբառերի:

Moodle համակարգում յուրաքանչյուր կիսամյակ ձևավորվում են բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի և ակադեմիական խմբերի՝ տվյալ կիսամյակի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների էլեկտրոնային բազաները: Այս համակարգում դասախոսները վերբեռնում են դասավանդվող դասընթացի ուսումնառության համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսները, մասնավորապես դասընթացի ծրագիրը, քննական հարցաշարը, ուսումնառության համար անհրաժեշտ մասնագիտական գրքերը, այլ ուսումնական նյութերը (դասախոսություններ, գրականության ուղեցույցներ, գիտական հոդվածներ, հետազոտություններ, ուսումնական նշանակության այլ նյութեր, շնորհանդեսներ, ուսումնական ձեռնարկներ, տեսաձայնագրություններ, առաջադրանքներ, քեյսեր, թեստեր և այլն):

Moodle.asue.am հարթակում յուրաքանչյուր ամիս դեկանատների կողմից զետեղվում են ums.asue.am էլեկտրոնային դեկանատի համակարգում տվյալ կիսամյակում ներառված դասընթացների դասախոսների և սեմինարավարների կողմից արձանագրված բացակայությունների և ակտիվության գնահատականների էլեկտրոնային մատյանների համապատասխան էջերը և ուսանողները կարող են տեսնել իրենց հաճախումների և ընթացիկ ակտիվության վիճակը՝ ըստ առանձին դասընթացների: Այս հարթակում են զետեղվում նաև քննագրաֆիկները և դեկանատի այլ հայտարարություններ, որոնք առնչվում են ուսումնական գործընթացին:

Moodle.asue.am հարթակում են իրականացվում նաև բոլոր ընտրովի դասընթացների, փորձառության վայրերի և ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը, ինչպես նաև դասընթացից և դասավանդողների որակից ուսանողների բավարարվածության անանուն հարցումները:

6. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աղյուսակ 6

2023–2024 ուսումնական տարվա ժամանակացույցը

Ուսումնական պլանի բովանդակությունը	*Տևողությունը /թվում/*	*Ժամանակահատվածը /ամսաթիվ/*
1-ին կիսամյակի տեսական ուսուցում	16	01.09.23 թ. - 22.12.23 թ.
Ձմեռային արձակուրդ	3	30.12.23 թ. - 02.01.24 թ. 20.01.24 թ. - 04.02.24 թ.
Կիսամյակային քննաշրջան	1	25.12.23 թ. - 29.12.23 թ.
	3	03.01.24 թ. - 19.01.24 թ.
2-րդ կիսամյակի տեսական ուսուցում	16	05.02.24 թ. - 24.05.24 թ.
Կիսամյակային քննաշրջան	4	27.05.24 թ. - 21.06.24 թ.
Ամառային արձակուրդ	9	22.06.24 թ. - 31.08.24 թ.

Աղյուսակ 7

Դասաժամեր

	1-ին հերթ	*2-րդ հերթ*	*3-րդ հերթ*
1-2	09:00 – 10:20	13:40 – 15:00	18:20 – 19:40
3-4	10:30 – 11:50	15:10 – 16:30	19:50 – 21:10
5-6	12:10 – 13:30	16:40 – 18:00	21:20 – 22:40

7. ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՊՏՀ գրադարանը ուսանողներին է տրամադրում հայերեն և օտարալեզու գրականություն, այդ թվում՝ գրքեր, ամսագրեր, ուսումնական ձեռնարկներ, գիտաժողովների նյութեր, ատենախոսություններ: Դրանք հասանելի են ինչպես ընթերցասրահներում, այնպես էլ պատվերի իրականացման միջոցով: Գործում է նաև էլեկտրոնային գրադարան, որն առաջարկում է թվային գրքեր, գիտական հոդվածներ, բաց հասանելիությամբ շտեմարաններ: Էլեկտրոնային գրադարան կարելի է մուտք գործել հետևյալ հղումով՝ library.asue.am: Թվայնացված գրականությունը հասանելի է հիմնականում համալսարանի տարածքում: Գրքեր կարելի է ներբեռնել նաև QR գրադարանից:

Սեպտեմբերից առաջին կուրսի ուսանողների համար կգործի բացառապես էլեկտրոնային պատվերի և բաց դարակի համակարգը, որը հնարավորություն կընձեռի ստանալու անհրաժեշտ գրականությունն առանց նախապես պատվիրելու: Գրադարանից օգտվելու կանոններին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://asue.am/am/library/regulations:

Առցանց պատվերի կանոնները կարող եք տեսնել այս հղումով՝

https:// asue.am/upload/files/library/gradaran_online.pdf:

Գրքերի վերադարձի ժամկետներն են. ուսումնական գրականություն՝ մեկ կիսամյակ անց, գիտական և գեղարվեստական գրականություն՝ 15 օր անց: Գրադարանի աշխատանքային ժամերն են 9:00-17:30, ընդմիջումը՝ 13:00-13:30:

8. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

1. Ուսանողները հնարավորություն ունեն մեկ կիսամյակ ուսումնառելու ՀՊՏՀ գործընկեր եվրոպական բուհերում՝ միջհամալսարանական պայմանագրերի շրջանակներում:
2. ՀՊՏՀ գործընկեր համալսարանների ցանկը, կրեդիտների փոխճանաչման, դիմելու և ֆինանսավորման պայմանները հասանելի են ՀՊՏՀ պաշտոնական կայքէջի «Միջազգային ծրագրեր» բաժնում:

9. «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Համալսարանը խրախուսում է ուսանողների գիտահետազոտական հմտությունների զարգացումը, ինչին նպաստում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնը: Ձգտելով իր նպաստը բերել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման, մրցունակության բարձրացման և պետական կառավարման ռազմավարությունների մշակմանը՝ «Ամբերդը» կարճ ժամանակահատվածում իրականացրել է հինգ տասնյակի հասնող հետազոտություններ, որոնց մի զգալի մասը՝ ՀՀ Կառավարության ոլորտային նախարարությունների պատվերների շրջանակում:

Հետազոտական ծրագրերում, բացի ՀՊՏՀ ներկայացուցիչներից, ընդգրկվում են նաև համապատասխան բնագավառների փորձառու մասնագետներ՝ ինչպես պետական կառավարման համակարգից, այնպես էլ մասնավոր հատվածից:

Յուրաքանչյուր ուսումնական տարի կենտրոնի աշխատանքներում ներգրավվում են ասպիրանտներ, մագիստրոսներ և բակալավրիատի 4-րդ կուրսի բարձր առաջադիմությամբ ուսանողներ: Դա իրականացվում է մրցութային հիմունքներով՝ ըստ հետևյալ չափանիշների.

- բարձր առաջադիմություն,
- տնտեսագիտության և վիճակագրության բնագավառների կիրառական գիտելիքներ,
- համակարգչային հմտություններ,
- օտար լեզվի իմացություն,
- թիմային աշխատանքի կարողություն:

Մրցույթի հայտարարությունները զետեղվում են ՀՊՏՀ կայքէջում, ինչպես նաև ՀՊՏՀ և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ֆեյսբուքյան էջերում:

10. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՏՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ), որն ունի կենտրոնական խորհուրդ և ֆակուլտետների խորհուրդներ՝ յուրաքանչյուրն իր գիտական ղեկավարով: Ամեն տարի ՈՒԳԸ-ն կազմակերպում է ուսանողական գիտական նստաշրջան, որտեղ զեկույցներով հանդես են գալիս ՀՊՏՀ ուսանողները: Նրանցից լավագույններն արժանանում են մրցանակների, իսկ զեկուցումներն ամփոփվում են համապատասխան ժողովածուում:

ՈՒԳԸ նստաշրջաններին մասնակցությունը ուսանողներին հնարավորություն է տալիս խորացնելու իրենց մասնագիտական գիտելիքները, զարգացնելու վերլուծական միտքը և փորձ ձեռք բերելու ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու և դրանց արդյունքները ներկայացնելու գործում:

11. ՄԱՐՔԵԹԻՆԳԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, հետևելով համաշխարհային թրենդներին, կարևորում է գործուն, կենսունակ մարքեթինգի և հանրային կապերի բաժնի գործունեությունը: Բաժնի նպատակն է բարձրացնել բուհի գրավչությունը, ներկայացնել ՀՊՏՀ-ն տեղական և միջազգային հարթակներում, կազմակերպել բուհի տեղեկատվակ ան, մարքեթինգային, հաղորդակցության և հանրային կապերին ուղղված աշխատանքների իրականացումը՝ միտված ՀՊՏՀ վարկանիշի բարձրացմանը, հաշվետվողական կերպարի ձևավորմանը, հանրության հետ հաղորդակցությունների գրագետ վարմանը: Այս կարևոր նպատակներն իրագործվում են հետևյալ գործիքներով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք /asue.am/,
- Facebook–ում ՀՊՏՀ պաշտոնական էջ /facebook.com/www.asue.am/,
- Linkedin–ում ՀՊՏՀ պաշտոնական էջ /linkedin.com/company/14796297/admin/,
- Instagram–ում ՀՊՏՀ պաշտոնական էջ /instagram.com/asueuniversity/
- Youtube ում՝ ՀՊՏՀ պաշտոնական ալիք /youtube.com/user/asueuni/,
- ՀՊՏՀ բլոգ /https://blog.asue.am/,
- Համագործակցություն ԶԼՄն երի հետ /https://asue.am/am/media/zlm/:

Մենք համոզված ենք, որ ՀՊՏՀ յուրաքանչյուր ուսանող բուհի դեմքն է, բուհի բրենդի ամբասադորը, ուստի կարևոր է, որ ցանկացած ուսանող ինքը լինի ՀՊՏՀ արժեքների և գաղափարների կրողը:

12. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՊՏՀ ուսանողական խորհուրդը ձևավորվել է 1994 թ.՝ որպես ուսանողության խնդիրներով զբաղվող ինքնակառավարման մարմին, որի գործունեությունը սահմանվում է ՀՀ օրենքների և համալսարանի կանոնադրության հիման վրա: Ուսխորհրդի նպատակներն են.

1. ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությունը,
2. ռազմահայրենասիրական դաստիարակությունը,

3. ուսումնակրթական և գիտական ոլորտներում աշխատանքների ծավալումը,
4. ազատ ժամանցի կազմակերպումը,
5. մարզական միջոցառումների անցկացումը,
6. ուսանողության շահերի ներկայացումը բուհական և արտաբուհական ասպարեզում,
7. ուսանողներին տեղեկատվությամբ ապահովումը:

Ուսանողական խորհրդի գործունեությունը ֆինանսավորվում է ՀՊՏՀ՝ տվյալ տարվա հաստատված բյուջեով նախատեսված միջոցներից և այլ աղբյուրներից:

13. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Ուսանողներն 1-ին կուրսի առնվազն մեկ ամսվա ուսման վարձը պետք է վճարեն մինչև սեպտեմբերի 15-ը:

Ուսման վարձի գանձման համար Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործում է հետևյալ հաշվեհամարը.

- h/h 900018001876, (ՀՎՀՀ 01503224)

Վճարման հանձնարարականի նպատակ դաշտում անհրաժեշտ է լրացնել.

1. ուսանողի անուն, ազգանուն, հայրանուն,
2. ֆակուլտետ, մասնագիտություն, կուրս:

asue.am

ՀՊՏՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ • ՓՈՐՁ • ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

1

2

3

4

5

6

1. **ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**
   Հանդիսասրահ՝ 1-ին հարկ
   Բուֆետ՝ 1-ին հարկ
   Դեկանատ՝ 2-րդ հարկ
   Մարք. և հասարակ. հետ կապերի բաժին՝ 2-րդ հարկ
   Միջազգային կապերի բաժին՝ 2-րդ հարկ
   Շարունակ. կրթության բաժին՝ 2-րդ հարկ
   Կարիերայի կենտրոն՝ 2-րդ հարկ
   Ռեկտորատ՝ 3-րդ հարկ
   Ռեկտորի աշխատակազմ՝ 3-րդ հարկ
   Հատուկ բաժին՝ 3-րդ հարկ
   Ուսումնական բաժին՝ 3-րդ հարկ
   Հաշվապահական հաշվառման բաժին՝ 4-րդ հարկ

2. **ՏԿ ԵՎ ՄՏՀ ՖԱԿՈՒԼՏԵՏ**
   Դեկանատ՝ 1-ին հարկ
   «Ամբերդ» հետազոտական կենտրոն՝ 10-րդ հարկ

3. **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**
   Դեկանատ՝ 2-րդ հարկ

4. **ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ԲԻԶՆԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**
   Դեկանատ՝ 2-րդ հարկ
   Բուժկետ՝ 1-ին հարկ

5. **ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՈՒԴԻՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ**
   Դեկանատ՝ 1-ին հարկ

6. **ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**
   Մարզադահլիճ՝ 1-ին հարկ
   Գրադարան՝ 2-րդ, 3-րդ հարկ
   Համակարգչային սրահներ՝ 3-րդ հարկ

   Հասցե՝ ՀՀ, Երևան, Նալբանդյան 128

7. **ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՎԻճԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**
   Դեկանատ՝ 2-րդ հարկ

   Հասցե՝ ՀՀ, Երևան, 0069, Պարույր Սևակի 77

Հեռ.՝ (+3741) 52 17 20
Ֆաքս՝ (+37410) 52 88 64
Էլ.հասցե՝ info@asue.am

asue.am

ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ
(առկա ուսուցման բակալավրիատի ուսանողների համար)

ԽՄԲԱԳԻՐ՝ Ս.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Ձևավորող՝ Ն.ԽՉԵՅԱՆ



ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն
ՀՀ, Երևան, Նալբանդյան 128